

ֆաղափազէտ ու ազգասէր, որուն դէմ իբր քէ անարդար գտնուած է Հայոց պատմութիւնը:

Յայտնի է, նշմարտութիւնը սիրողներ դատապարտեցին իր տեսութիւնը. գլխաւորապէս Անդրանիկ Անդրէասեան (Նոր Օր, Սուրբա եւն.) եւ ձեռնարկ Մանտալեան (Հայրենիք), որոնց դէմ նոր պրակ մը հանեց Հ. Արմէն «Քննադատները ջղախալ» յայտարարութեամբ:

Այո՛, բարեկամ, եւ ի՞նչպէս չըզայնանան երբ արհամարհելով ազգի մը կրօնական խոր համոզումը յանդգնութեամբ շորքել կ'ուզես լուսապսակը՝ Գաղափարի եւ Ազատութեան ախոյեան Ղեւոնդի մակտէն, խոռվարար ու ջղապար որակելով զինքը եւ կարծես տխարներու կոյր հօտի մը նմանցնելով անոր հետեւող Հայ կղերը, Հայ բանակը եւ ամբողջ Հայ ժողովուրդը:

Ո՛չ, պարո՛ն: Ղեւոնդ աստուածային ոգի մը ունէր եւ ամէնէն խոր եւ սրտես ֆաղափազիտութիւնը: Նա ժառանգն էր այն մեծ շինարար ու ֆաղափազէտ Ներսէսին՝ որ կ'օրհնէր հայ սուրբ եւ Նպատի բարձունքին բազկատարած կ'աղօթէր Զիրաւի մէջ մարտնչող հայ բանակի յաղթանակին համար:

Ղեւոնդ աշակերտն էր մեծն Սահակի, որուն բարձր ֆաղափազիտութիւնը կ'ապշեցնէ մեզ՝ յաւիտեանապէս դատապարտելով մեր կոյր եւ տխար իշխանները, որոնք հակառակ իր խրատին, հակառակ իր գուրգուրանքին հայ արքային եւ հայ քաղաքին ու անկախութեան վրայ, մատնեցին, կործանեցին մեր գահն ու անկախութիւնը:

Ու Հայաստան մնաց որք եւ անտէր: Հոյակապ հորեմացի մը պէտք էր որ լայ եւ ողբայ այդ բշտառութիւնը:

Եւ այդ բշտառութիւնը իր ծայրագոյն վիճակին հասցնելու համար նենգաւոր Յակոբքան յարձակեցաւ մեր հայրենիքի յետին պատուարներն ալ խորտակելու՝ կրօնքը եւ խղիւղի ազատութիւնը:

Ահա Հայ ազգին, Հայ եկեղեցւոյ ահաւոր նգնաժամը:

Եւ անբաժնի սկսեւ էր արդէն:

Կրնա՞ր Ղեւոնդ սառնասիրտ մնալ երբ հայ եկեղեցիներ կը կործանէին ու սրբութիւններ կը պղծուէին:

Մենք ալ «արժան եւ իրաւ» կը գոչենք՝ երբ Ղեւոնդ ու իր ամբողջ մեր սրբութիւնները պղծողներուն գլուխները կը խորտակեն:

Արդար չէ Պրն. Հրանդ Արմէն երբ պատմական փաստերն հաւատարմութեամբ չի ներկայացներ: Յակոբքանի յետակոչումները «կեղծ» են եւ «լիբր» կ'աղաղակեն Եղիշէ եւ Փարպեցի. ինչո՞ւ հակառակը պնդել. ի՞նչ նպատակով:

R. Grousset փրանսացի պատմագէտը անկախօրէն կը վնո՛ւ քէ «Վասակ արժանի է մատնիչ մեղադրանքին՝ գոր իրեն դէմ կ'արձակեն Եղիշէ եւ Ղազար, պառակտած ըլլալուն համար՝ գերագոյն ժամուն՝ հայ բանակները»:

Թողունք որ մատնիչ Վասակը Աստուծոյ եւ Հայրենիքի անէծքով տոչորի: Ան ամբողջ ազգ մը լացուց, արժանի չէ կարեկցութեան: «Երանի՛ քէ ծնած չըլլար» միայն կարելի է ըսել անոր, ինչպէս ըսաւ Փրկիչը մատնիչ Յուդայի համար:

Բայց Ղեւոնդ, մեծն Ներսէսի եւ մեծն Սահակի հոգին ու մարմնացումը, գերագոյն աստիճանով աստուածասէր է ու հայրենասէր եւ ազատասէր. այդ երբեակ սէրերովն էր որ հրդեհեց նա հայ աշխարհը եւ գայն տարաւ մինչեւ Արտագ ու իր ֆաշերուն եւ իր արիւնով փրկեց եւ հաւատք, եւ խիղճ եւ հայրենիք եւ ազգի պատիւ:

Օրհնեալ ըլլայ ան բոլոր հայ սրտերու մէջ եւ բոլոր հայ շրջներու վրայ առ յաւիտ, ինքն ու իր հետեւորդ լուսապսակ բոլոր նահատակները, Հայ ազգին փրկութեան ախոյեանները:

ԽՄԲ.

Ա Պ Ր Ո Յ Ե Ա Ն Գ Ե Ր Դ Ա Ս Տ Ա Ն Ը

ԱՍՏԱՎԵՊ ստէպ առիթ գտած է Ապրոյեան տոհմին վրայ զրելու¹. Ներկայ յօդուածիս պատճառը կու տայ ճարտարապետ Ս. Ճէվահիրի 1952 սեպտ. 5-ի մէկ նամակը, ուր կը հաղորդէր թէ Լուզանի քաղաքապետութիւնը որոշած ըլլալով ընդարձակ վարժարան մը կառուցանելու ճանապարհը գերեզմանոցի հողին քաղքին նախկին գերեզմանոցի հողին վրայ, կը յայտնուի 1857-ին կանգնուած Ապրոյ գերեզմանին մէկ քանի անգամ. Ներուն շիրիմը: «Գոթական ոճով, մասամբ աւերուած, բայց գեղեցիկ յուշարձան մ'է, կը զրէ, և շատ լաւ վիճակի մէջ մնացած է ընտանեկան զինանշանը՝ թափառական թագով. և կը պատկերացնէ գաւորական թագով. և կը պատկերացնէ երկու առիւծներու միջեւ նոյեան աղանին՝ ձիթենիի ճիւղը կտուցին: Յիշատակարան ինչ վրայ արձանագրուած անուններն են».

Abraham Abro 1857

Pierre Abro 1857

Raphael-Charles Abro 1867

Arakel-Pierre Abro mort à Gondar en Abyssinie 1875

Marie Therèse Abro 1889

Ճարտ. Ճէվահիրի խնամքով լուսանկարուած այս Յուշարձանը կ'արտատպենք հաճոյքով, ինչպէս նաեւ նոյն ընտանիքի

անդամներէն ոմանց իւզաների զիմանկարներուն՝ նուիրուած Միարանութեանս իշխան Ասլան Ապրոյէ, որոնք յարգանքով կը պահուին Ս. Ղազարու թանգարանին մէջ, յիշեցնելով նոյն ընտանիքի համակրութիւնը:

Ճշտումներ մ'ալ ընելով մեր պատուական բարեկամ Յ. Քիրտեանի հրատարակած Ապրոյեան Գերեզմանի ճիւղագրութեան վրայ, կը յաւելունք նոյն տոհմին մեզի ծանօթ վերջին շառաւիղներուն ալ անունները, տալով ոմանց կենսագրական տեղեկութիւնները, թէեւ անոնք անծանօթ մնացած չըլլան Վահան Զարդարեանէ և ուրիշներէ²:

Հուսկ կը զետեղենք Ապրոյեան ընտանիքի սեփական Աստուածաշունչի Յիշատակարանը, որ մանրամասնութիւններ կը բովանդակէ 1688-ին Չմիւնիոյ երկրաշարժին և Մատթէոս Ապրոյի վրայ, Աստուածաշունչը գրուած է «ի թուականիս Հայոց ՌՂԶ» = 1647-ին ի կ. Պոլիս, իւրովի Յակոբ սարկաւազէ, զարդարուած բազմաթիւ մանրանկարներով, և կրնայ նկատուիլ գեղարուեստական տեսակէտով՝ կ. Պոլսոյ զարդին հայ մանրանկարչութեան լուսագոյն ներկայացուցիչը: Չքնաղ գործը վանքիս Մատենադարանին նուիրուած է իշխան Ասլան Ապրոյէ 1923-ին³:

1. Բարերար արուեստագէտ մը. Հ. Կիրեղ Քիւարեան. Բզմվ. 1918, էջ 86.

Բագրատունի Ուսկերթոյ տ'Ապրոյ. Հ. Սահակ Տէր Մովսէսեան. Բզմվ. 1919, էջ 108.

Բագրատունի Ուսկերթոյ տ'Ապրոյ իշխանի ոսկերաց փոխադրութիւնը. Հ. Ղեւոնդ Տայեան. Բզմվ. 1932, էջ 345.

Ներքին Պուլկարահայ պատմութեան համար. Ապրոյ Զէւէպի. Յ. Քիրտեան. Բզմվ. 1925, էջ 258. 1926, էջ 37.

2. Վ. Զարդարեան. Յիշատակարան. կ. Պոլիս. 1910-13, էջ 269. Նոր Դար. Գահիրէ, 1940, էջ 1-3. Հմմտ. Չմիւնիոյ Պատմ. Հայոց Հտ. Բ. Գլ. 39, էջ 411. Մատենա Աղաւնի. 1857, էջ 229.

3. Յիշեալ Զեւէպի, ինչպէս կը տեսնուի, ուր մտած ըլլալով վանքիս զրդերներուն հաւաքածոյին մէջ, բնականօրէն դուրս կը մնայ Հ. Բարսեղ Սարգիսեանի «Մայր ցուցակ»-էն: Բայց հետագային Հ. Եղիս Վ. Փէլիկեան զայն նկարագրած է «Բագմավէպ» 1935 տարւոյն Սեպտ.-Ռեկտ. միացեալ բացատրիկին մէջ,



ԱՊՐԱՆՆԵՐԻ ԼՈՋԱՆԻ ՇԻՐԱՆ (ԶՈՒՅՏԵՐԻԱ)

1

Ապրոնները զրեթէ չորս դարէ ի վեր ազնուական տոհմ կը համարուին մեր Ազգին մէջ, ունին ազգաբանութիւն մը տասնըվեցերորդ դարէն, և ճիւղազրութեան մէջ իբր նահապետ տոհմին յիշուած Աստուածատուրը կ'ըսուի թէ Անիէ գաղթած է Կարին: Իսկ Բագրատունիներու ցեղէն սերած ըլլալուն թէպէտ չկայ յայտնի ապացոյց, սակայն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան Ծիրանածին⁴ անուանելով Ապրոյ Չէլէպին, և Մուրատ հայրը՝ Խան տիտղոսը կրելուն համար արքայական ցեղէ կը համարի⁵: Իրենց վկայաթղթերուն մէկ մասը կորսուած, մնացածը Չմիւռնիոյ Ապրոյեաններու մօտ եղած ատեն նիոյ Ապրոյեաններու մօտ եղած ատեն քննուած է 1804 ապրիլ 20ին Չմիւռնիոյ Մարտիրոս եպիսկոպոսէն, որ կը հաստատէ անոնց ազնուականութիւնը, ինչ որ տպագրութեամբ ալ հրատարակուած է: Իսկ ֆրանսերէն վաւերական բնագիր թարգմանութիւնը, մագաղաթի վրայ, կը պահուի վանքիս դիւանին մէջ, նուիրուած իշխան Ասլան Ապրոյէ, և ասոր հետեւողութեամբ կազմուած է ճիւղազրութիւնս մինչեւ 1804: Աստուածատուր խոր ծերու-



Ապրոններու շէրիտը Լոզանի մէջ

էջ 443-444, ուր յիշեալ Հայրը յետ տալու ձեռագրին ամփոփ նկարագրութիւնը՝ զրեթէ ամբողջութեամբ կը հրատարակէ « Յաւարտ Նոր Կտակարանին » գտնուած արձակ յիշատակարանը, զրուած նոյնինքն ձեռագիրը զրոյց – նկարողէն՝ կարելու ծանօթութիւններով:

4. Ընդ Հեթմոյ և Լեւոնին Թագազարմեան

Ծիրանածինըս Աբրահամ հանգիտական

Մինն ի նոցունց՝ ի սոյն կէտի յար և նման:

5. Յակոբ Գ. կաթողիկոս 1671-ին կոնդակով մը Առաջնորդ կը կարգէ Լեհաստանի Հայերուն Թէոդոր Վարդանանց անուն զեմական վարդապետը, Բագրատունիներու ազնուական ցեղէն, կանչելով Վաղարշած պատէ, Կոնդակը զրուած է 1680-ին Պոլսոյ մէջ և կը կրէ Յակոբ կաթողիկոսի ստորագրութիւնը և կը պահուի իշխան Ասլան Ապրոյի մօտ, իսկ Խաւերէն վաւերական թարգմանութիւնը կը մնայ Միաբանութեանս դիւանին մէջ, ստորագրութեամբ Աթոռակալ Հ. Ղ. Աւի-

շան վ. և Հ. Գարեգին վ. ընդհ. Քարաուղարի Միւթարեանց: Թէոդոր չի կրնար որոշուած աթոռը զրաւել, որովհետեւ Յովհաննէս Կարիմաղենց կը նստի մինչեւ 1678, և յետոյ ծերունին Նիկիո վերստին կը դառնայ իր թողած պաշտօնին:

Այս վաւերաթուղթը սակայն զմեզ կը հետաքրքրէ, որովհետեւ ապացուցանել կը թուի թէ Թէոդոր բացի Բագրատունիներու ցեղին վերաբերելուն, Ապրոններու տոհմին մէկ ուրիշ ճիւղին կը պատկանի: Թէոդոր անունը, որ Աստուածատուր կը նշանակէ, կը տեսնուի Ապրոններու ազգատոհմին ճիւղազրութեան զուտը և իրեն յաջորդներուն մէջ ալ: Իսկ Բագրատունի ցեղին յիշատակութիւնը եթէ դիտմամբ յետոյ կը ծածկուի և լուսնի կը տրուի, ինչպէս իշխանական միւս ցեղերու անունները, զգուշութեան հետեւանց չի տիրող կառավարութիւններուն (Թուրքերուն և պարսիկներուն) կասկածը չարժեքներնեւ՝ համար, հասկնալի պատճառով:

ւոյն, Զմիւռնիոյ Յովսէփ եպիսկոպոսէ. որ յետ անաւոր երկրաշարժը և ըրած աւերները նկարագրելու, յատկապէս Մատթէոս Ապրոյի նորաշէն տունը, ինքնին Մատթէոսի բերնովը կը պատմէ չորս զաւակներուն աւերակներու տակ գտնելը ու անոնց թաղումը. մայրն ու զսքանչն ալ կորսնցնելը այս աղէտին մէջ, մինչ կինը միայն ողջ կը գտնէ՝ պարտէզ ապաստանած: Յիշատակարանս երկրաշարժէն գէթ երկու տարի վերջը պէտք է գրուած ըլլայ, որովհետեւ կը յիշէ նորածին Աբրահամ զաւակը (ծն. 1689 Նոյ. 13, Դշ. օր): Կը յիշէ նաեւ կիւլիհան մայրը և Մաքսուտ աւագ եղբայրը, որու համար կ'ըսէ թէ հաստատուած է լատինացւոց երկիրը: Աբրահամէ վերջ Աստուած իրեն պարգեւեց ուրիշ որդիներ ալ որ են՝ Պետրոս, Ստեփան և աղջիկ մը՝ կիւլհան անուն: Լուդովիկոս Ժ. Կ. պաշտպանութեան և ազնուականութեան թղթեր կ'ընդունի 1687-ին: Զարգարեան կը յիշէ Զմիւռնիոյ մէջ եղած դամբանին հետեւեալ արձանագրութիւնը. «Այս է տապանը

Ապրոսեան Մաթոս աղայի որդիք Աբրահամ և Մուրատիւան աղայներաց որ հանգեան ի շարժէն ի թվին ՌՃԼԷ Յունիսի է»: Մատթէոս թաղուեցաւ Զմիւռնիոյ Ս. Ստեփանոս եկեղեցին: Ապրոններու Զմիւռնիոյ մէջ ունեցած տան դռներէն մէկը ծառայած է Մագնեսիայի եկեղեցիին խորանին:

6

Արրահամ, Պետրոս և Ստեփան մինչեւ Պարսկաստան, Հնդկաստան տարածեցին վաճառականութիւնն ին և շատ հարստացան: Աբրահամ և Ստեփան իզմիրի մէջ, և իրենց եղբայրը Պետրոս Ամստերտամի մէջ վաճառականական մեծ տուններ ունէին: Աբրահամ չորս մանչ ունեցաւ, Մատթէոս, Ռափայէլ, Սեթ և Յովհաննէս, և երկու աղջիկ՝ Գայիանէ և Թագուհի, որոնք յաջորդութիւն չթողուցին. իսկ Աբրահամ կը մեռնի Պոլսոյ մէջ, թէեւ Լիվոռնոյի Հայոց եկեղեցիին մէջ ալ թաղուած կը յիշատակուի 1719-ին Ապրոյի Զէլէպի մը, թողը առաջին Ապրոյի. չենք կրնար ըսել թէ նոյնն է¹¹: Պետրոս առաջին թարգման

11. Մետրոպոլիտ. Ուլուրեան կը պատմէ վերոյիշեալ եր. գրքին մէջ (էջ 80), թէ Ապրոյի Զէլէպի մը 1705-ին զատ բացած է Աղա տէ Մաթուսի գէմ, որ մշտապէս Ազգապետ ընտրուած էր և վերակացու եկեղեցիի մը շինութեան Լիվոռնոյի ազգայնիկներէ: Ապրոյ կը յաղթուի 1706 Օգոստ. 21-ին տրուած վճիռով և կը պարտաւորուի ծախքերը վճարելու: Կը յիշէ նաեւ (էջ 64-65) Ապրոյի Գէորգ Զէլէպի մը, որու իշխանութիւն կը տրուի (1689-ին) Ազգին կողմէ, բարեպաշտներէ ողորմութիւն հաւաքելու, զնելու համար Ազգին անունով Ֆրանչիսկեանց վանքին վերաբերեալ պարտէզը, և յարմար ժամանակին սկսելու եկեղեցիի հիմնարկութիւնը. 1692-ին կը զնուի պարտէզը վճարելով 5489 բէցցաթուանայի դրամով. Հմտ. *Parere Legale sopra le uffiziature dela Chiesa Armena stabilita in Livorno.* (Livorno Tip. Pardini, 1870). Զ. Մ. Վ. Պոտուրեան կը յիշէ «Հայ Հանրագիտակ»-ի մէջ (1938 Պոտուրեան) Ապրոյի Սահակ մը, Ապրոյի Զէլէպիի ծանօթ գերդաստանէն. ծնած Զմիւռնիոյ մէջ 1823 Սեպտ. 15-ին, հետեւելով Վ. Զարգարեանի «Յիշատակարան»-ի և թէոգիկի «Ամենուն Տարեցոյց»-ին (1912, էջ 308). Եւ

կը յաւելու. Երեւանագ ճառակին Պոլիս երթալով՝ մտած է Բ. Դուռ և անուանուած թարգմանութեանց զիւանի անդամ. 1852 Փետր. 28-ին՝ պաշտօնակից Գրեգոր Մարկոսեանի հետ կը սկսի հրատարակել «Նոյեան Աղանի» շաբաթաթերթը, որ կը տեւէ մինչեւ 8 Օգոստոս 1853:

Առտաքին գործոց նախարարութեան մէջ կարեւոր պաշտօններ վարելէ ետք, Ալի փաշայի եպարքոսութեան օրով կայսերական զիւանին Ա. թարգման և յետոյ Արտաքին Գործոց ընդհ. քարտուղար կ'անուանուի:

1876-ին Ֆելիպէի արտասովոր յանձնաժողովի անդամ, յետոյ նախագահ, Անիէ յետոյ քանի մը կարեւոր պաշտօններ վարելէ ետք կ'ընտրուի Անդամ պետական խորհուրդի, ուր կը մնայ ցմա՛ 1900:

Ազգային գործերու մէջ ալ կարեւոր պաշտօններ վարած է և թուրքերէնի թարգմանած է Մեծն Պետրոսի և Վլթերի «Կարոյոս Ժ.Բ.»-ի պատմութիւնները, Ժ. Պ. Սէյի «Քաղաքական Տնտեսութիւնը», Մարքեթիլիի Իշխանը, յետոյ Բիֆաթ փաշայի հետ հրատարակած է նաեւ քաղաքական անձերու վրայ ուսումնասիրութիւն. ներք.

էր անգլիացիներու. ունէր չորս զաւակ՝ Աստուածատուր, Գալուստ, Առաքել և Մարգար, և երկու աղջիկ՝ Սարա և Մարթա: Թաղուած է Զմիւռնիոյ ընտանեկան շիրմին մէջ, Ս. Ստեփանոս եկեղեցին: Մեծն Պետրոս իրեն և իր երկու եղբայրներուն՝ Աբրահամի և Ստեփանի, 28 Յունուար 1717-ին նուիրած է կայսերական մեծ կնիքով հրովարտակ մը, երկրին մէջ ազատ վաճառականութիւն ընելու: Գալուստ և Մարգար չամուսնացան, դպրոց մը հիմնեցին տղայոց համար: Գալուստ թաղուեցաւ Զմիւռնիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին:

7

Ստեփան եւս երեք մանչ և երկու աղջիկ ունեցաւ. Բարթոլոմէոս, Յակոբ և Յարութիւն. իսկ աղջիկները կը կոչուէին՝ Սրբուհի և Բրարիոն:

8


Աստուածատուր՝ Պետրոսի որդին, և եղբայրը՝ Առաքել, իրենց հօրը նման վաճառականութեան և թարգմանի ասպարէզին նուիրուեցան. առաջինը՝ թարգման էր Հոլանտացիներուն, իսկ երկրորդը՝ Անգլիացիներուն: Երկու այս եղբայրները կեանքներին ընծայեցին բարեգործութիւններու, և նշանաւոր եղան Ազգին հանդէպ ունեցած իրենց սիրովը և ամէն առիթներու մեծ ծառայութիւն ըրին: Աստուածատուր ինը զաւակի տէր եղաւ, Ալիփար, Մարգար, Մատթէոս, Պետրոս, ուրիշ Ալիփար մը, Յակոբ, երկրորդ Պետրոս մը և երկու Գալուստներ, և չորս ալ աղջիկ ունեցաւ, Մարիամ, Աննա, Սրբուհի, Իսկուհի: Թաղուեցաւ իր ընտանեկան գերեզմանը Զմիւռնիոյ Ս. Ստեփանոս եկեղեցին:

9

Իսկ Առաքել ունէր երեք մանչ, Գալուստ, Աբրահամ և Սեթ, երեք ալ աղջիկ՝ կիւլհան, Մենենտ, Աննա:

10

Արրահամ Ապրոյ ծնած է Զմիւռնիա 1793-ին, մայրը կը կոչուէր Մարիամ: 1814-ին կը զբաղի վաճառատունով Թրիեստի մէջ իր մօրաքեռորդին՝ Պօղոս Պէյ Եոսուֆի ըով, որ Եգիպտոսի Մէհմէմէտ Ալիի սեղանաւորն ու գործակալն էր: 1835-ին Աբրահամ պատկուեցաւ Մարիամ



ԱՐԱՄԱՎԱՅ ԱՎԱԿԻԱՆ

ծն. 1793 † 1857 Նկար Կորախեանի

Քրամէր գերմանացի օրիորդին հետ և ծնաւ չորս զաւակ, Ռափայէլ, Առաքել, Պետրոս և Մարիամ, որ եօթը տարուան էր հօրը մահուան ժամանակ: 1826 Նոյեմբեր 13-ին այցելած է Ս. Ղազար, ինչպէս նշանաւորուած է այցելուներու տետրին մէջ: Աբրահամ Ապրոյ իր գործերուն հետեւանքով կը ճամբորդէր Եգիպտոս, Լոնտոն, Բարիզ, ուր մեռաւ իր Պետրոս օրդույն մահուան ցաւովը, որ երկու ամիս առաջ վախճանած էր: 1857 Սեպտ. 21-ին Բարիզի մէջ

ձեռք առնուած խոհեմ միջոցները չազդեցին զինուորական ապստամբութեան պետերուն վրայ, և Յուլիս 12-ին Աղեքսանդրիա ռմբակոծուեցաւ անգլիական զրահաւորներէն. հետեւեալ 10 օրերուն մէջ Եգիպտացի ապստամբ զինուորները և չարագործներու կատաղի խումբերը օտարականներու տունները կողոպտեցին և քաղաքը հրդեհեցին և ջարդեր կազմակերպեցին: Ապստամբ զինուորները այսչափով չբաւականանալով Սուէզի ջրանցքին երկու կողմի թուփերը կը մտադրեն ուժանակով խորտակել ու խափանել շոգենաւերուն անցուղարձը. այս շատ յանդուգն խորհուրդը եթէ իրականանար, մեծ աղետներ պիտի պատճառէր Եգիպտոսի: Սոյն ճգնաժամի պահուն խտրվը Աղեքսանդրիա կը գտնուէր, իսկ նախարարներու խորհուրդին անդամները ցրուած և հեռացած էին. խտրվին քով կային քանի մը հաւատարիմ խորհրդատուներ միայն, որոնցմէ մին էր Տիգրան փաշա, որ Ֆէրտինանտ տը Լըսէփսի հետ միասին դիմում կ'ընէին Արապի փաշայի՝ բացատրելով անտեղութիւնները որոնք յառաջ կրնային գալ ջրանցքին վնասուածութիւնը. որով ջրանցքը ազատ կը մնայ իր գոյութեան սպառնացող վտանգէն:

Տիգրան փաշա յօգուտ Եգիպտոսի շատ մեծ դեր խաղացած է նաև երբ խտրվ Ապպա փաշայի տրուած կայսերական հրովարտակին մէջ, Սուլթան Համիտ խտրվին իրաւասութեան շրջանակէն դուրս ձգած էր Չէյլա և ուրիշ տեղեր: Տիգրան

փաշա իբր Արտաքին Գործոց Նախարար ետ կը ղրկէ կայսերական հրովարտակը, որուն իբր հետեւանք Սուլթան Համիտ կը ստիպուի յիշեալ տեղերու վրայ խտրվական իրաւասութիւնը վերահաստատել: Կարգադրած է Եգիպտական կառավարութեան մեծ տաղտուկ պատճառող խնդիր մը, երբեմն Օսմանեան հպատակ ու ետքէն Հելլենական թագաւորութեան ենթակայ կղզիներէն Եգիպտոս պանդխտող Յոյներու հպատակութեան խնդիրը, որ վերջնապէս կարգադրած է Յոյներու ընդհանուր հիւպատոս և դիւանագիտական գործակատար Պ. Կոնփարիսի հետ:

Տիգրան փաշա սիրուած էր, ամէնէն բարձր պաշտօնեաներէ անգամ. ինք բնութեամբ ուղիղ, պարկեշտ և վերջին ծայր համակրելի անձնաւորութիւն մըն էր: Նախարարական իր պաշտօնին մէջ խտրվներու իրաւունքները եռանդով պաշտպանած է և միշտ ազգայնական մը եղած է. անանկ որ Անգլիական իշխանութեանց դժգոհութիւնը հրաւիրած է իր վրայ: Լորտ Գրոմբըր մեծ յարգանք ունէր իրեն հանդէպ, այնուհանդերձ որ գիտէր Տիգրան փաշայի կարծիքը, « Եգիպտոսը՝ Եգիպտացիներուն », և զինքը կ'անուանէր « Համարձակ Հայր »: ու երբ իրեն կ'ընծայէր նախարարապետութիւնը, Տիգրան մերժած է ըսելով, թէ չէր կրնար « Ծառայ Ըլալ ծառայի մը »:

Տիգրան փաշա ամուսնացած էր Պօղոս Նուպար փաշայի կրտսեր աղջկան Զիպա Նուպարի հետ¹⁵, ուսկից ծնած են իշխա-

15. Նուպարեան ընտանիքը սրիշ անգամ ալ զօրուած է Ապրոյեան տոհմին հետ: Տիգրան վիկտ. Արշարունի Նուպար փաշայի կենսագրութեան մէջ կը գրէ. « Պօղոս Պէյ Երեսուֆեան ծնած էր Զմիւռնիա 1769-ին. մանկութեան օրերէն որք մնացած՝ ձեռք զրաւ վրան, ինչպէս Պետրոս եղբորը և Մարիամ քրոջը վրայ Առաքել Աղա Ապրոյեան՝ մօրեղբայրը: Իսկ Նուպար փաշայի մամը՝ քոյրն էր Ապրոյ Արքայազամի: 1700ի սկիզբը Յովսէփ Պօղոսեան անուն Կեսարացի երիտասարդ մը Զմիւռնիա կու գայ, ուր իր ազնիւ և խելացի ձիրքով

Ապրոյեան գերդաստանին սիրելի կ'ըլլայ, կ'ամուսնանայ Ապրոյեանց աղջկան հետ, և երեք գումակներ կ'ունենայ. Պօղոս, Պետրոս և Մարիամ: Տակաւին անհրաժեշտ որքեր թողնով կը մնան, չխորհելով թէ իր Երեսուֆ (Յովսէփ) անունը որչափ պիտի բարձրանայ: Երեսուֆեան մանուկները դաստիարակուեցան իրենց մօրեղբոր Ապրոյեան Առաքել աղայի տան մէջ ուր ամէն ինչով շնորհակցաւ իրենց. ամէն մէկը զատ զատ ուսուցիչներ ունեցան... Երբ Պօղոս 20 տարեկան եղաւ Առաքել աղա տեսնելով Պօղոսի յատկապէս վիճակը

նուէի ինձէ 1885-ին, ամուսնացած ձիւնորիի հետ, և իշխան Արամ՝ ծնած 1886-ին¹⁶:

Տիգրան փաշա հակառակ իր բազմազրադ վիճակին, Ազգային գործերու մէջ ալ բաժին ունեցած է: 1883-ին Ստեփան փաշա Ասլանեանի լիազօր պատուիրակու թեան օրով, նախ երեսփոխան և յետոյ ալ Ազգային ընդհանուր ժողովի ատենապետ ընտրուած է և այդ պաշտօնին մէջ մնացած, մինչեւ վերջը օգտակար ըլլալով դժուարին և կնճռոտ խնդիրներու լուծման: Ան նախագէս և բարոյապէս օգնած է հայկական բարենպաստակ հաստատութիւններու և ձեռնարկներու: Հայկական ջարդերէն ետք՝ Եգիպտոս ապաստանողներու օգնելու համար ոչ միայն իր անձնական քսակէն մեծամեծ զոհողութիւններ ըրած է, այլ և հասոյթի աղբիւրներ և ստեղծած է և շատերուն գործ գտած և պաշտօններու մէջ հաստատած է:

1904-ին Տիգրան փաշա Ֆրանսա կ'ուղևորի ինքզինքը դարմանել տալու համար, և հոն կը մեռնի՝ Յուլիս 29-ին:

գայն իր տեղը առաջին թարգման զրաւ Անգլիացոց Զմիւռնիոյ հիւպատոսին մօտ:

(Յիշատակարան 1934 թ. հտ. էջ 12): Իսկ Միքայիլ Նուպարեան որ առաջնակարգ դեր մը ունեցած էր Զմիւռնիոյ մէջ վաճառականութեան շնորհիւ, հոն ամուսնացած էր Կիւլհանումի հետ և ունեցաւ երկու զաւակ Առաքել Պէյ և Նուպար փաշա: Իր դամբարանը գտնուեցաւ քանդուած է, Ս. Ստեփանոս եկեղեցոյն այրուելէն ետք, վերաշինուած ատեն բոլոր հին տապանաքարերը թաղական աղաներու հրամանով կոտորուեցին և իբրեւ քար գործածուեցին են: Այս ցաւալի քանդումէն ետք 1857ին Աստուածատուր Ապրոյ՝ Միքայիլ Նուպարեան ընտանիքին ոսկերտին սանդուղին անմիջապէս կից տեղ մը հաւաքելով՝ նոր քար մը դրած է, հետեւեալ հաւաքական արձանագրութեամբ. « Յետ նորոգման եկեղեցոյս յայտն շէրմի եղան ոսկերք Միքայիլ աղայի Նուպարեան, նորին կողակից Կիւլհանում (Կիւլգաստէն) խաթունի և որդոց Դարու Պէյին և Սողոմոն Զէլէպիին որք ի ժամանակս ի Տէր հանգեան »:

Այս տապանաքարէն կը հասկընանք թէ Միքայիլ Նուպարեան կ'ունենայ չորս զաւակներ որք են Դարու, Կարան, Գահիրէ. 1940, էջ 1.

Մարմինը Նոյեմբերին փոխադրուած է Գահիրէ, ուր փառաւոր յուզարկաւորութիւն մը տեղի ունեցած է: Թաղուած է Ազգ. գերեզմանատան մէջ իր վաղամեծիկ կնոջ Տիգրան Զիպայի քով: Մասնաւոր կտակով յիսուն հազար ֆրանս. ֆրանք թողած էր Գահիրէի Առաջնորդարանին. որ իր եղբայրը իշխան Ասլան Ապրոյ վճարած է, և սոյն գումարով շինուած է Ազգ. Առաջնորդարանը: Իր անունը կը կրէ Աղեքսանդրիոյ ազնուական պողոտաներէն մէկը:

15

Տիգրան փաշայի եղբայրն է իշխան Ասլան Ապրոյ, ծնած 1848 Օգոստոս 30-ին Շիրա, ճամբորդութեան մը հետեւանքով: Հայրն էր Ստեփան Ապրոյ¹⁷, իսկ մայրը Լամա Սպարբէս՝ անգլիացի¹⁸: Մկրտուելով Սպարբէս, նոյն թիւնը ստացած է Զմիւռնիոյ մէջ, նոյն ատենի Առաջնորդ եպիսկոպոսէն: Երեք տարեկանին հայրը վախճանելով, մայրը իտալիա գալով հաստատուած է Նափոլի, երկու մանչ և երկու աղջիկ զաւակներով,

Սողոմոն, որոնց վրայ տեղեկութիւն չունինք, և Առաքել Պէյ և Նուպար փաշա:

(Յիշատակարան Վ. Զարդարեանի 1934 թ. հտ. էջ 8):

16. Արամի և իր քրոջ՝ մարդկուհի ինձէ ձիւնորիի առատաձեւութեան կը պարտի Միւրանութիւն 1913ին, հայ գրի տանը հինգերորդ դարադարձին, Վանքիս Մանապարեանին ձեռագիրներու բաժնին առաստաղի նկարները՝ Քերուպինի նկարչին գործ: Կեդրոնի բոլորակին մէջ Ս. Մեսրոպ ծոնը դրած Հայաստանի առջեւ՝ կը ներկայացնէ նորագիւտ հայկական տառերը. իսկ Հայաստանը պատկերող թագուհին քովն ունենալով կրօնը և զիտութիւնը, ոտնակոխ կ'ընէ տղիտութեան խորհրդանշը՝ խեչափառը: Սենկին շուրջը եղած նկարները կը յայտնեն դարաներուն մէջ ամփոփուած զրջագիրներու նիւթը, Հմտ. Բազմավեպ. 1913:

17. Ստեփան ճաշած է կ'ըլլուի Գրիգոր Ս. Փառնայապետին հետ, որ երբ կը հարցնէր անոր թէ « Հայերը երբ ամբողջովին ուղղափառ պիտի ըլլաք », պատասխանած ըլլայ. « Երբ Ձեր Սրբութիւնը մեր Ազգին անկախութիւն պարգեւէ »:

18. Հուանագիր, ըստ Վ. Զարդարեանի. Յիշատակարան Գահիրէ. 1940, էջ 1.

ուր անոնց կրթութեամբ պարապած է։ Ասլան Ապրոյ ուսումնական ընթացքն աւարտելէ վերջ, հետեւած է արուեստասէրի իր բերումին, և մեծ գովեստով ընտրած է գեղարուեստից վարժարանը, արժանանալով շքանշանի։ Խալալական հպատակութիւնը դեռ չընդունած՝ մտած էր հասարակաց գործերու մէջ, և մարդասիրական նպատակներով ստանձնած օգտակար ձեռնարկներ։ 1875-էն սկսեալ անդամակցած էր առողջարանական, բարեգործական ու կրթական Յանձնաժողովներու, և 1878-էն ի վեր տնտեսական պաշտօններու բարձրացած Նափոլիի քաղաքապետական ժողովին մէջ և շատ անգամ Բոզիլիբրոյի քաղաքապետի փոխանորդ անուանուած է։ Նոյն 1878-ին Բոզիլիբրոյի Մարգարիտա թագուհին անունը կրող մանկապարտէզին հիմնդիրներէն մէկը եղաւ, որ 1882-ին փակուելով, յաջորդ տարին Ապրոյ իշխանէն կրկին բացուեցաւ և վերածուեցաւ Որբանոցի և լքեալ տղոց Ապաստանարանի, ուր կրցան ապաւինիլ 1884-ի ժանտախտին պատճառով որբ մնացած բազմաթիւ աղքատ մանուկներ։ Այս Հաստատութեան նախագահութիւնը Ասլան Ապրոյ միշտ պահած է, և իր գործունէութեան շնորհիւ այնքան զարգացած է մինչեւ բարոյական մարմին (ente morale) ճանչցուեցաւ։ 1879-ին պատուաղիր Ուսուցիչ է Նափոլիի Գեղարուեստական վարժարանին մէջ։ Եւ ինչպէս որ արդիւնաւոր մէկը եղաւ քաղաքային պաշտօններու մէջ, նոյնպէս ալ գործունեայ նուիրուող մը դիւանական և մտաւորական շարժումին՝ թէ Խալալիոյ և թէ իր Ազգին համար։ Շատ տարիներ խորհրդական եղած է գեղարուեստից զարգացումին համար կազմուած Ընկերութեան, անդամ «Կարմիր Խաչի», և թագաւորական հրովարտակով Նախագահ անուանուած Նափոլիի արուեստից և ճարտարուեստի թանգարանին։ 1884-ին իշխան Ասլան Ապրոյ երջանիկ ամուսնու-

Թեամբ մը կապեց իր բախտը ազնուատոհմ
ընտանիքէ Մեկանիա տի Վիլլա Մա-
րինայի հետ ¹⁹, ուսկից ծնաւ 1886 Հոկտ.
16-ին, բարերախոս զիպուածով մը Գուրի-
նալի արքունիքի պալատին մէջ, մանչ
զաւակ մը, որու անունը զրուեցաւ Ում-
պերթոյ՝ ի յիշատակ Խաւիւոյ Մարգա-
րիտա Թազուհիին, որ յատուկ շնորհ
մ'ընելով ուզեց մկրտութեան աւագանէն
ընդունիլ մանուկը։ Ասլան Ապրոյ 1882-ին
արքայական հրովարտակով ընդունած էր
խաւական փոքր հպատակութիւնը, իսկ
բուն հպատակութիւնը իրեն շնորհուեցաւ
1899-ին։ Սակայն Ապրոյի սիրտը դադրած
է էր երբեք բարախելէ իրր Հայ, և մեծ
արդիւնք ցոյց տուած է 1880-8 թուա-
կաններուն, երբ մերթ Բարիզ և Լոնտրո
կ'ուղեւորէր ազգային վերածնունդին ա-
ջակցելու նպատակով։ Կարգ մը թղթակ-
ցութիւններ Ներսէս Պատրիարքի, Ճէյմս
Պրայսի, Մինաս Չերազի, Հայաստան
Թերթի տնօրէն՝ Ժան Պրուսալիի, Հայրե-
նասիրական ընկերութեան քարտուղար՝
Մ. Սըվազլիի և Հ. Սուքիաս Պարոնեանի
հետ՝ ապացոյց են որ եռանդուն աշխատող
մը եղած է հայկական դատին։ Նամակի
մը մէջ Աստուածատուր Զունդ կը գրէ
իրեն. « Դու առանձին այնչափ բերբ,
որչափ մենք անկարող եղանք »։ Նա իր
ճկունութեամբ յաջողած էր Լոնտրայի
մէջ Յանձնախումբ մը կազմել բովանդակ
Հայաստանի վարժարաններուն համար,
անգլիացի զանազան դասակարգի անձերէ,
սկսեալ կղերականներէ, երեսփոխաններէ,
լրագրապետներէ, նախագահ ունենալով
վեստմինիստրի դուքսը, և վարժարան

19. Մայրն էր Փասլա Ռէյնոն, իսկ հայրը՝ Մար-
քէզէ Մանուէէն, որդի Սաւվաթորէ տի Վիլլա Մարի-
նայի, դեսպան Բարիզի մէջ, որ Կոմս Քաւպուրի հետ
մասնակցեցաւ Խրիմի պատերազմին վերջ Բարիզ զոռ-
մարում ժողովին: Սա ամուսնացած էր Մարքէզէ Ռո-
պէրթոյ տ'Աճեւիոյի աղջկան հետ, ըստ նշանաւոր Մաս-
սիմոյ տ'Աճեւիոյի:



ՍԱՌՆՈՑԻ ՀՈՎԻՏԸ (ՆԱՓՈԼԻ) ՆԿԱՐ ԻՇԽԱՆ ԱՍԼԱՆ ԱՊՐԱՑԻ

անուներ քօղ մ'էր ծածկելու Հայաստանի
անկախութեան համար աշխատանքը ։
Սկսած էր նաեւ հայերէն սորվիլ ։ Յա-
ջողած էր զրամական նպաստ եւս ընդունա-
յալ նպատակով իտալական պետութեանէն ,
զեսպանատան միջոցով ։ Ասլան իշխանի
բողոք , թղթակցութիւնները կիլիկեան , Ա-
բարատեան , Արեւելեան , Դպրոցասիրաց
ընկերութիւններու հետ (թորոսեանէ ,
Դէորդ Ապտուլլահէ , Զարեհ Շիշմանեանէ
և ուրիշներէ ստորագրուած) ցոյց կու տան
պարբերաբար ընդունուած զումարները ։
Նամակներ՝ որ այժմ կը պահուին Միա-
բանութեանս զիւանին մէջ ։ Ան պատուոյ
անդամ ալ էր Միացեալ Ընկերութեան ։
Ապրոյ իր ձեռնարկին մէջ յաջողելու
համար , զիմած էր նաեւ Լեւոն ԺԳ հայա-
սէր մեծ Քահանայապետին , ուսկից տասը
հազար Քրանքի նպաստ մը ընդունած էր ։
Եւ այս առիթով կը յիշէր նա Քահանա-
յապետին մէկ խօսքը ։ « Բարի սիրտ ու-
նիս , բայց չար միտք » , որ չարաճճի
ծիծաղով մը կը կրկնէր ։ Հոովմի մէջ առիթ

ունեցած էր խօսելու նաև Գեր. Հասուն
ծիրանաւորի հետ, որ իր լուսանկարը
նուիրած էր, և Ապրոյի գործ է կ'ըսուի
Բրորականտայի սրահին մէջ կախուած
ծիր. Հասունի նկարը:

Երբ 1917-ի ամառը Մուրատ-Ռա-
փայէլեան վարժարանին աշակերտները
Նոգերայի իր ամարանոցը այցելութեան
տարած էի, Ապրոյի երակներուն մէջ
կրկին արժարձեցաւ նոյն օրը հայկական
արիւնը. ամէն կողմ անձամբ առաջնոր-
դելէ ու հլրասիրելէ վերջ իր բնական
զուարթ կատակարանութիւններով, ուզեց
նոյն օրուան յիշատակը յաւերժացնել
նուիրելով Ս. Ղազարու թանգարանին իր
«Սառնոյի հովիտը» իւզանկարը, որ ուրիշ
Հայ հեղինակներու նուիրած նկարներու
քով զարդն է պատկերներու հայկական
բաժնին: Ապրոյ իր ազգասիրութեան ուրիշ
ապացոյց մ'ալ թողուց, կտակելով իր և
իր վաղամեծիկ Ումպերթոյ զաւակին ա-
նունով հիմնադրամ մը՝ Մ.-Ռ. վարժարա-
նի մէջ աշակերտ մը պահելու համար:

16

Ասլան Ապրոյի երկու քոյրերն են Վարդանի (Կիւլզատէ) ծնած 1850-ին, որ ամուսնութեամբ կոչուեցաւ Ալպանեթթա Դըսուհի, և զաւակներն են Էնրիքոյ՝ զինուորական ասպարէզի նուիրուած. Վինչէնցոյ, Ստեփան՝ ատենակալ քաղաքական, և Էմմա՝ ամուսնացած Բրոֆ. Սաւի Լուբէզի հետ, ուսուցիչ Նոր-Լատինական լեզուներու, և ժամանակաւ նպաստաւոր ճառ մ'ալ խօսած է Հայերուս վրայ:

17

Երկրորդ քրոջ անունն է Երանուհի, ծնած 1851-ին, ամուսնացած Մարքիզ Յովսէփ Գրանաֆէ Սերանովայի հետ, իր զաւակներուն անուններն են Գէորգ, Ասլան, և Ուկոյ: Ասլանի արիւթիւնը և քաջութիւնը ներբողուած է 1917 Օգոստոս 5-ի զինուորական օրակարգով մը, որու մէկ օրինակը կը պահուի Միաբանութեանս զիւանին մէջ:

Հ. ՔԵՐՈՒՄԷ Վ. ԶՐԱՔԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ես Մաթէոս տեառն ծառայ նուաստ հոգի Որ եմ որդի բարեպաշտին Աբրահամի Զոր մականուամբ Ապրո կոչեալ միշտ յորջորջի Միթէ տէրն իմ հոգոյ նորին յար գթասցի ի թուականիս հազար հարիւր երեսնյոթնի ի յամսեանն նոյեմբերի տասն և հինգի Խորհուրդ մի գաղտ սըրտի իմում հաստատեցի Բիւզանդիոյ չուեալ եկեալ Իզմիրս ի շի Ամ մի ողջուն ի տունս այլոց բնակեցի Բայց զիւրութիւն ըստ իմում մտացս ես ոչ գըտի Այնուհետեւ միտք եւ ձեռք իմ ի գործ արկի Զի տազնապաւ ի շինութեանց յոյժ ջանացի Եկեալ յաւարտ կատարեցաւ որքան տուն էր Աման ձման մեզ օթարան որքան հարկ էր Մեծաւ ծախիւք յօրինուածօք որպէս յարկ էր Պէտքէս դըռները ամուր փակելը զոր պատշաճ էր Զի նոյն թուոյ որ սկիզբը կարգեցաք Եկեալ մինչեւ Յունիս ամսոյ երեսունն հասաք Ամենայն ինչ ըստ պատշաճին կատարեցաք Որպէս իմ կամք էր յօրինեալ զարդարեցաք Յորժամ սըհաթն ի վեշտասանն լմնեցաք

Վասն ինչ կարի հարկաւորաց շուկայն գնացաք Առեալ զնոսա փութանակի յետս դարձաք Եկեալ մինչ մեր հայոց եկեղեցին հասաք Յայնժամ տէրն իմ վասն իմ մեղացն յոյժ բարկացեալ

Յօդք միրկեալ տարերք խառնեալք սիւնք դողալցեալ

Սաստիկ թընդիւն ի յանդնոց վերառաքեալ Յոյժ ահագին իզմիւռինս շարժումն եղեալ Զչորից կողմանց յորմունք քարինք ի յիս դիմեալ Սաստիկ յահէս յոյժ տազնապաւ փախուստ առեալ Զեռն իմ ի սուրբ Ստեփաննոսի յորմըն ձըգեալ Զիս նա յանձնեալ եւ ի յԱստուած ապաւինեալ Քարինք ի վերայ իմ դիգեալ եւ զիս ծածկեալ Լոյս արգելեալ մէզ եւ խաւարըն զիս պատեալ Այնուհետեւ համարեցաւ ես զիս մեռեալ Մեղայ գոչեալ ելման հոգոյ իմում սպասեալ Բայց բարերար Աստուածն իմ յոյս յիս գթացեալ Ողորմութեամբ եւ քաղցրութեամբ նախախնայմեալ

Ազգմամբ հոգոյն զիս խելամուտ կարօղս արար Զի ոյժ առեալ որպէս զՎազար արտաքս ելեալ Յայնժամ ես ի յոտին կանգնեալ և յիս նայեալ Տեսի արեամբ զիս ճապողեալ վիրաւորեալ Իսկոյն տունն իմ ի միտ ածեալ անդ սըլացեալ Զի ի հիմանց էր տապալեալ բըլուր եղեալ Միայն զամուսին իմ գերծեալ պարտիզին կայր Զմայր եւ զորդիքս ներքեւ հողոյ էին մնացեալ Մեծաւ ջանիւ խուզումն առեալ մայրըս գըտեալ Եւ ընդ նըմին զոքանչն իմ ծեր ի դուրս ելեալ Ապա զորդիքս մըտաբերեալ յոյժ փըղցկեալ Լալոտ աչօք կարկառս քարանց ի բաց հերքեալ Յորժամ ելին մարմինք նոցին յոյժ խողխողեալ Հոգոց հանեալ միջակուտը սըրտաբեկեալ Յորժամ տեսի զլեարդ եւ զաղիս իմ խարշատեալ Իբր ըզխաղող մէջ հընձանին էին ճմլեալ Հառաչանօք աւաղելով զկեանս իմ անցեալ Զի բազում երկամբք աշխատանօք էաք սնուցեալ Զքառեակ մանկունս բարձմամբ ի գիրկ շիրիմ Ես ըզկընի մորմոքելով աղեկիգեալ [տարեալ Միում վայրկեան ժամանակի լինին փոխեալք Եղեն ի մէնջ իսկ հեռացեալ եւ անջատեալք Սարսափելով ելեալ գնացաք դուռն ժամուն Միթէ յորմունք եկեղեցի կայր ի կանգուն Ընդ վարդապետն նըստեալ լայեաք պատմելն [զնոյն

կայր պաշարեալ ձեռն կըցեալ յոյժ կըսկծոյն կէս քաղաքիս էր տապալեալ եւ կործանեալ

Յոլով մարդիք ընդ կենդանոյն ներքեւն առեալ Ոմանք մեռեալ, ոմանք բեկեալ, ոմանք կորեալ Ոմանք գերծեալ խելաց թափեալ եւ ցընորեալ Ոմանք կիսով ի ծերպ փայտի քարի անկեալ Ոմանք ներքոյ ծածկի մնացեալ եւ արգելեալ Ոմանք տեղի նըսեմացեալ էին մնացեալ Ոմանք ըզհայր զեղբայր զորդիս միմեանց ձայնեալ Յայնժամ լուաք ձայն աղէտի կըսկըծալի Վայոց ճչոց եւ հառաչումն սարսըռելի Ով որ իցէ կարող պատմել որ ոչ հենգնի Անհընարին երկունք պատեաց յոյժ տազնապաւ Եւ մինչ մեք սուգ առեալ լայաք եւ ողբայաք Թէ ըզպատիժս վասն մեղաց մերոց կրեցաք Միւս տազնապաւ եւ չար համբաւ եւս լուաք Ճայթմունք եւ ձայնք ահագնակի ահիւ պակեաք Յանկարծակի հուր հըրդեհեալ բորբոքեցաւ Յարեմըտեան հողմն սաստիկ դէմ հընչեցաւ Յարեմըտեան տեղիս տարածեցաւ Ի սուղ ժամու բազում տեղիս տարածեցաւ Յոլով խաներք եւ ապարանք ճարակեցաւ Անթիւ անձինք ընդ կենդանոյն հրով այրեցան Աղի ողորմ ձայնիւ հընչմամբ տոչորեցան Հայրք եւ որդիք յօգնել միմեանց ժամ ոչ գըտան Միայն զինքեանս ազատելոյ հընարեցան Ելեալք ի տանց եւ յընտանեաց փախուստ դարձան Ստացուածք եւ գանձք ոչ ինչ համարեցան Սաստիկ էր Տեառնըն բարկութիւն ոչ ժուժեցան Իսկոյն անկեալ ի մէջ այգեաց բընակեցան Ոմանք ժուժեալ ոմանք անտի ելըս փախան Ոմանք ի նաւ ոմանք ի գեօղ անկեալ գերծան Յոլովք հարուստք աղքատացան ընչից մերկացան Բազումք աղքատք եւ աւագակք փարթամացան Զնորաչն տունն իմ քակեալ քայքայեցան Զյօթըն ծառայս եւ աղախնեայս ջախջախեցան Զի պէս պէս վիշտ ինձ եւ տանն իմ պատահեցան Շնորհիւ Տեառն բարձեալ ի մէնջ եւս հեռացան Զայս կըրեցի վասն իմ մեղացն իմացաւ եւ Խըրատելով խըրատեաց Տէր գիտացի եւ Ոչ թէ ի սպառ յուսահատեալ տրամեցաւ եւ Այլ գոհացեալ մարդասիրէն փառս ետու եւ Որ զիսն եհար նոյն կարող է բըժըլկել զիս Հոգեւորօք մարմնականօք ըսփոփել զիս Կըրկին տալով հանգոյն Յօբայ պերճ առնէ զիս Ըստ հաճոյից կամաց իւրոց հատուցէ զիս Այլ գոհանամ միշտ յարարչէն հեշտալուր է Մեղաւորաց դարձ եւ զըղջումն կամեցող է Զի հաւատով խնդրուածոց կատարող է

Ի յաղաչանս իւր ծառայից խոնարհող է Լուր Տէր գըթած եւ ողորմած յար աղաչեմ Զտիւ եւ զգիշեր կողկողագին քեզ պաղատեմ Շնորհեալ ինձ Տէր որդի բարի յոյժ կարօտեմ Յուսով սիրով եւ հաւատով քեզ դիմեալ եմ Կաթիլ ջըրոյդ արժան արա ծարաւի եմ Ի յաղբերէք քոյ արբեցո պապակեալ եմ Ոչ պակասի քոյո բարեացդ գիտակ իսկ եմ Պըտուղըս տալ վէրըս բուժել անճարակ եմ Լսողն աղօթից հայցուածոց լուալ ինձ Տէր Զորք զարտասուս իւր ծառայի ընկալաւ Տէր Ետ մըխիթար իմ Աբրահամս ըսփոփեաց Տէր Ըզտրամութիւնս եւ ըզնեղանս փարատեաց Տէր Ոչ թէ իմում փոխան բարեացն հատոյց ինձ Տէր Այլ ըստ առատ իւր գըթութեանս պարգեւեաց Տէր Զայս առնելով զիս յորդորէ ի կամս իւր Տէր Կամի փըրկել ինձ որսողի նետիցըն Տէր Այժմ որ ունիմ ըզմանկիկըս Տեառն շընորհեալ Դեռաբուսիկ ծաղկափըթիթ նոր բողբոջեալ Սոլալ եբարձ զարտօսը աչաց մերոց տըխրեալ Եւ զուարճացոյց մեծաւ սիրով որպէս ըզհայր Յորժամ լըսէ ձայնըս երգոց եղանակաց Խօսի լեզուաւ որպէս ըզճազըս աղանեաց Խընդա աչօք պարէ ձեռօք ի դէմս բազմաց Ուրախ առնէ ըզբազմականս սիրտս ծընողաց Ի քէն հայցեմք քաղցր եւ բարի ներող գըթած Զի ես առատ անխակալ եւ ողորմած ինձ եւ զաւակս ի քեզ յանձնեմ Քրիստոս Աստուած

Զմեզ պահպանեալ զի արեամբըդ քոյ եմք գընած: Զհայրն իմ նախկին զոր ծանուցի Աբրահամն է Զմայրն իմ համեստ արի զգաստ Կիւլիհան է Աւագ եղբայր իմ զոր Մախսուտ կոչեցեալ է Զոր այժմ երկրին Լատինացւոց գետեղեալ է Երեսս եղեալ ըզձեզ աղերսեմ ով ընթերցողք Զաստուածաբուղի տառիս պատմօղք եւ հետեւօղք Յիշել յաղօթս զիս եւ զեղբարս հանդերձ ծընողօք Ողորմիւ տալ լըբճմըտութեամբ սրտի մըտօք Զայս ծըրեցաւ ի թվականիս հայկականի Հազարորդի հարիւրորդի քառասնորդի Ի յամսեանն Փետրուարի տասն եւ ութի Դեռան սըրբոյ եկեղեցոյս Ստեփաննոսի Բանիւ Յովսէփ անթիւ մեղայ պարտապանի Եպիսկոպոս ի ըզմիւռինս Ասիայի Որք հանդիպիք եւ ընթեռնուք տուք ողորմի Միթէ Տէրն իմ ձեզ եւ ի մեզ ողորմեցի: -